# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ ՀՌՉԱԿՄԱՆ 1700-ԱՄՅԱԿ

2001 թ. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, համայն հայությունն ու քրիստոնեական աշխարհը կտոնեն Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակը: Նշանակալի այս հոբելյանը վերարթնության գեղեցիկ մի առիթ է յուրաքանչյուր հայ հավատացյալի համար:

2001 թ. ողջ ընթացքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանու ներքո տեղի կունենան բազմաթիվ միջոցառումներ՝ եկեղեցական հանդիսություններ, գիտաժողովներ, ցուցահանդեսներ ու մշակութային այլ հայտագրեր: Դրանցից մի քանիսն ունեն առանձնակի խորհուրդ ու նշանակություն:

## 1700-ԱՄՅԱԿԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Դեկտեմբերի 31, 2000 - Հատուկ եկեղեցական արարողություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, որով կազդարարվի նոր դարասկիզբը և Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակը:

2. Ապրիլի 24, 2001 - Ուխտագնացություն Տեր Քոր՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ:

3. Հունիսի 17, 2001 - Տոն Ս. Էջմիածնի:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ավանդական այս տոնը Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքի հիշատակության տոնն է:

4. Հուլիսի 10-20, 2001 - Երիտասարդական ուխտագնացություն Հայաստան:

Դեպի Հայաստանի տարբեր սրբավայրեր և մասնավորապես Խոր Վիրապ-Էջմիածին-Երևան ուխտագնացությանը կմասնակցեն հազարավոր երիտասարդներ Հայաստանից և սփյուռքից, ինչպես նաև այլ քրիստոնյա երկրներից:

5. Սեպտեմբերի 21, 2001 - Էկումենիկ արարողություն Ս. Էջմիածնում՝ ի նշանավորումն Հայաստանի անկախության 10-րդ տարեդարձի՝ հանդիսապետությամբ

Ամենայն Հայոց Հայրապետի և մասնակցությամբ քույր Եկեղեցիների հոգևոր պետերի ու նրանց ներկայացուցիչների:

6. Սեպտեմբերի 22, 2001 - Ս. Մյուռոնի օրհնություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

7. Սեպտեմբերի 23, 2001 - Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու օծումը:

8. Սեպտեմբերի 30, 2001 - Եպիսկոպոսական ձեռնադրություն:

9. Նոյեմբերի 4, 2001 - 1700-ամյա հոբելյանական տոնակատարությունների հանդիսավոր փակում:

* * *

2001 թ. կարևորագույն միջոցառումներից է փետրվարի 19-ից 21-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կայանալիք երիտասարդ միաբանների ժողովը՝ Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ:

2001 թ. կնշանավորվի նաև Ամենայն Հայոց Հայրապետի հովվապետական այցելություններով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու բոլոր թեմեր:

Հոբելյանական փարվա ընթացքում կօծվեն նոր եկեղեցիներ, կիրականացվեն ծրագրեր՝ ուղղված քրիստոնեական դաստիարակության ամրապնդմանը: Գեղեցիկ ու հետաքրքիր միջոցառումներից է 48 վանքերի շրջակայքում իրականացվելիք ծառատունկը: